ՍՐԳԻՇՏԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԲՈՒՆ ԱՂՎԱՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆ ԸՍՏ «ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ»-Ի

XIX դ. վերջին – XX դ. սկզբին Աղվանքի բուն գավառների տեղադրության, վարչական նկարագրի հարցերով զբաղվել է Սակար Բարխուտարյանցը[1]: Առաջնորդվելով իր տեսածով նա հանգամանորեն ներկայացրել է երկրի աշխարհագրական սահմանները, գավառների տեղադրությունը, բնակլիմայական պայմանները, գետային ցանցը: Հեղինակի նկարագրությունները, սակայն, տարբերվում են «Աշխարհացոյց»-ի հաղորդումներից, քանզի դարերի ընթացքում կատարված վարչական փոփոխությունների հետևանքով մի շարք գավառներ այլևս գոյություն չունեին, փոխվել էին նաև դրանց անվանումներն ու էթնիկական կազմը: Ըստ այդմ, հասկանալի է, որ Մ. Բարխուտարյանցը չէր կարող տալ բուն Աղվանքի գավառների վարչաքաղաքական այն պատկերը, ինչը գոյություն ուներ Անանիա Շիրակացու օրերում՝ VII դարում: Ուստի, մենք կօգտագործենք հեղինակի միայն այն հաղորդումները, որոնք համապատասխանում են «Աշխարհացոյց»-ի տվյալներին:

«Աշխարհացոյց»-ի թե՛ ընդարձակ, թե՛ համառոտ խմբագրություններում առաջինը հիշատակվում է Եխնի գավառը: Սկզբնաղբյուրը փաստում է, որ Եխնի գավառը սահմանակից է Վիրքին՝ «առ Վրօք»[2], Ս. Երեմյանն իր աշխատությունում և կից քարտեզում Եխնի գավառը տեղադրում է Վիրքի սահմաններից դեպի արևելք[3]՝ դրանով իսկ փոքրացնելով Աղվանքի սահմանները: Եխնի գավառն ունեցել է ավելի մեծ տարածություն, քան նշում է Ս. Երեմյանը: Վերջինս Եխնի գավառի տարածությունը հաշվում է 1722 կմ²՝ այն տեղադրելով

---

[1] Բարխուտարեանց Մ., Աղվուանից երկիր և դրացիք: Արցախ, Երևան, 1999, էջ 34–152, նույնի՝ Պատմութիւն Աղուանից, հ. Ա, Վաղարշապատ, 1902:

[2] Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց (այսուհետև՝ «Աշխարհացոյց»), Վենետիկ, 1881, էջ 29:

[3] Տես Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրության հիմքի վրա), Երևան, 1963, էջ 50 և կից քարտեզը Բ7:

այժմյան Զաքաթալայի շրջանում[4]: Կարծում ենք, որ Եխնի գավառը սկսվում է այնտեղից, որտեղ ավարտվում է Վիրքի սահմանը, այսինքն՝ Վելիս-Ցիխե ամրոցի շրջակայքից՝ իր մեջ ներառելով «Գավազք» գավառի[5] տարածքը: Եխնի գավառը հյուսիսից սահմանակից է Կովկասյան լեռնաշղթային, հարավից՝ Աղուան (Ալազան) գետի երկարությամբ բաժանվում է Կամբեճան գավառից, արևելքից սահմանակից է Բեխ գավառին, իսկ արևմուտքից՝ Դիդոյքին[6]:

Հակառակ սկզբնաղբյուրների տեղեկությունների, որոնք Եխնի գավառը համարում են Աղվանքի անբաժան մաս, վրաց պատմաբան Դ. Մուսխելիշվիլին գավառը ներառել է Վիրքի կազմում: Նա նշում է, որ V դարում Եխնի և Բեխ գավառները միացվեցին Վիրքին[7]: Իր իսկ խոստովանությամբ՝ սկզբնաղբյուրներում չգտնելով հաղորդում այն մասին, որ Եխնի և Բեխ գավառները պատկանել են Վիրքին, այդ տեղադրման համար որպես հիմք նշում է վրացիների և աղվանների «քաղաքական համագործակցությունը» հին ժամանակներից, որը պայմանավորված էր տնտեսական պատճառներով[8]: Սակայն, ինչպես կտեսնենք, մինչև V դարի կեսերը Աղվանքում գոյություն ուներ թագավորական իշխանություն, իսկ վերջինիս վերացումից հետո ստեղծվեց մարզպանություն, որի կազմում էլ գտնվում էին Եխնի և Բեխ գավառները: Վրաց հեղինակի հիմնազուրկ փաստարկները քննադատության չեն դիմանում այն պարզ պատճառով, որ VII դ. «Աշխարհացոյց»-ը նշում է, որ Աղվանքը V դարում ունեցավ ոչ թե տարածքային կորուստներ, այլ, ընդհակառակը, մի շարք գավառներ միացվեցին Աղվանից պետությանը[9]: Եխնի և Բեխ գավառները մարզպանության գոյության ողջ ընթացքում մնացին Աղվանքի կազմում, իսկ ինչ վերաբերում է վրաց պատմաբանի կարծիքին, կրկին

---

[4] Նույն տեղում, էջ 50, 119:

[5] Ս. Երեմյանը Եխնի գավառի հարևանությամբ նշում է Գավազք գավառը: «Աշխարհացոյց»-ում, սակայն, այդ մասին հաղորդում չկա: Կարծում ենք, որ նման անվանումով գավառ ընդհանրապես գոյություն չի ունեցել:

[6] Տե՛ս Հարությունյան Բ., Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ, Երևան, 2001:

[7] Мусхелишвили Д., Из исторической географии Восточной Грузии (Шаки и Гогарена), с. 18.

[8] Նույն տեղում:

[9] Տե՛ս «Աշխարհացոյց», էջ 28–29, 33:

նշենք, որ «քաղաքական համագործակցության» հետևանքով մեկ պետության գավառը բնավ չի անցնում մյուս տերությանը:

Կամբեճան գավառի տեղադրությունն Անդրկուրյան Հայքում ուսումնասիրողների մոտ տարակարծությունների տեղիք չի տվել: Գավառն Անանիա Շիրակացու օրերին արդեն գտնվում էր Աղվանքի կազմում և, ըստ այդմ, «Աշխարհացույց»-ում հիշատակվում է նրա գավառների շարքում: Դա հաստատվում է նաև Ղևոնդի տեղեկություններով: Պատմիչը, անդրադառնալով խազարների Այսրկովկաս կատարած արշավանքին, նշում է. «Առնուին բազում գաւառս գՀէջար, զՔաղա, զՈստանի, զՄարզպանեան, զՀաբանդ, զԳեղաւու, զՇաքէ, զԲեխ, զԽենի, զԿամբեխճան, զԽողմաղ»[10]: Գավառը, ինչպես նշել ենք, Աղուան (Ալազան) գետով սահմանակից էր Եխնի և Բեխ գավառներին, իսկ արևելքից՝ Գետառու գավառին: Կամբեճան և Գետառու գավառների հատման կետում գտնվում էր Գվգավ քաղաքը: Հարավից գավառը Կուր գետի երկարությամբ սահմանակցում էր հայկական Ուտիքին, իսկ հյուսիս-արևմուտքում՝ Վիրքին: Կամբեճանն ունեցել է նշանավոր բերդեր և գյուղաքաղաքներ[11]: Գավառի մեծ մասն իր բնակլիմայական պայմանների պատճառով անմարդաբնակ է եղել, քանի որ, ըստ «Աշխարհացույց»-ի տեղեկության, Կուդրաթ գյուղաքաղաքից «Վայրքն անապատ մինչեւ ցԿուր գետ...»[12]: «Աշխարհացույց»-ից առաջ այդ մասին վկայում է նաև Ստրաբոնը: Անդրադառնալով Հայաստանի նկարագրությանը, նա գրում է. «Հայաստանը մասամբ իրենից ներկայացնում է հարթավայր, մասամբ էլ լեռնային երկիր, ինչպիսին է Կամբեճանը, որտեղ հայերը սահմանակից են միաժամանակ իբերների և աղվանների հետ»[13]:

Ելնելով այս հաղորդումից՝ վստահորեն կարելի է ասել, որ գավառի բնակչության հոծ զանգվածները կենտրոնացած են եղել Կուր գետի և գավառի միջով հոսող Կամբեճ գետի շրջակայքում:

Բուն Աղվանքի գավառացանկում երրորդը Բեխն է: Հյուսիսից

---

[10] Պատմութիւն Ղեւոնդեայ մեծի վարդապետի հայոց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 132:
[11] Տե՛ս Վարդանյան Ա., Աղվանքի քաղաքներն ըստ հունա-հռոմեական և հայկական սկզբնաղբյուրների, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2011, թիվ 3, էջ 98–105:
[12] «Աշխարհացույց», էջ 29:
[13] Страбон, XI, IV, 1.

գավառը սահմանակից է Կովկասյան լեռնաշղթային՝ «առ Կաւկասաւ»[14], հարավ-արևմուտքից՝ Ալազան գետով Կամբեճանին, իսկ արևելքում՝ Շաքե գավառին:

Գավառը գտնվում է այժմյան Կախի շրջանում:

Բեխ գավառում պահպանվել են եկեղեցու ավերակներ, որտեղից հայտնաբերվել է արծաթյա խաչ: Եկեղեցին շրջապատված է միջնադարյան հայ հանգստարաններով[15]:

Աղվանքի հաջորդ՝ Շաքե գավառի տեղադրությունը տարակարծությունների տեղիք չի տալիս: Ըստ «Աշխարհացոյց»-ի գավառը գտնվում է Բեխից արևելք[16]: Մենք համակարծիք ենք Ս. Երեմյանի և Բ. Հարությունյանի տեսակետներին, ըստ որոնց Շաքե գավառը հյուսիսից սահմանակից է Կովկասյան լեռնաշղթային, հարավից Գետառու գետի ամբողջ երկարությամբ սահմանակցում է համանուն գավառին, արևելքից՝ Հողմազ, իսկ հյուսիս-արևմուտքից՝ Բեխ գավառին[17]:

Շաքե գավառի ընդհանուր տարածությունը կազմում է 870 կմ^2 և գտնվում է այժմյան Նուխիի շրջանում[18]: Գավառի տարածքում կան հայկական մի շարք եկեղեցիներ՝ Սուրբ Գևորգ, Սուրբ Գեղարդ[19], նաև Գիս վանքը: «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության մեջ հիշատակված Աղվանքի հաջորդ գավառը Գետառուն կամ Դեգառուն է: Վերջինիս տեղադրությունը հստակ է, քանի որ «Աշխարհացոյց»-ը հաղորդում է. «Դէգառու գետ. առ որով հոմանուն գաւառ՝ առ Սանի գետով»[20]: Հյուսիսից գավառը սահմանակից է Շաքե գավառին, հարավից՝ Կուրին, արևելքից՝ Սանի գետով բաժանվում է Հողմազ և Քաղաց դաշտ գավառներից, իսկ արևմուտքում՝ Կամբեճանին: Թվում է՝ Գետառուի սահմանները որոշելիս չպետք է խնդիր առաջանա, քանի որ «Աշխարհացոյց»-ը հստակ տալիս է գավառի աշխարհագրական դիրքի մանրամասն նկարագրությունը: Դրան հակառակ՝

---

[14] «Աշխարհացոյց», էջ 29:
[15] Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 108:
[16] «Աշխարհացոյց», էջ 29:
[17] Տես Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 44 և կից քարտեզը, Բ7, Հարությունյան Բ., Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ:
[18] Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 73:
[19] Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 136–137:
[20] «Աշխարհացոյց», էջ 29:

Ս. Երեմյանը Քաղաց դաշտ գավառը տեղադրում է Սանի գետի երկու կողմերում՝ մի մասով մտցնելով Գետառու գավառի մեջ[21], ինչը հակասում է սկզբնաղբյուրի տեղեկությանը: Այդ մասին ավելի հանգամանորեն կխոսենք Քաղաց դաշտ գավառի տեղադրության քննության ժամանակ:

Գետառու գավառն այժմ զբաղեցնում է Աջինոուրի - Էլդարի տափարակ տարածքը: Գավառի ընդհանուր տարածությունը Ս. Երեմյանը հաշվում է 1575 կմ^2(?)[22]: Սակայն, կարծում ենք, որ գավառն ունեցել է ավելի մեծ տարածություն՝ ի հաշիվ Քաղաց դաշտ գավառի:

Այս գավառի աշխարհագրական նկարագրությամբ «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրությունում ավարտվում է Աղվանքի վարչական նկարագրությունը: Մենք կփորձենք գավառների մյուս մասը ներկայացնել «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրություն առկա հաղորդումների հիման վրա:

Բայց մինչ այդ նշենք, որ «Աշխարհացոյց»-ի մի շարք ձեռագրերի հաղորդումների և ուսումնասիրողների կազմած քարտեզների միջև հակասություն է նկատվում: Դա ակնհայտ է նաև սկզբնաղբյուրի աշխարհաբար թարգմանության մեջ: Նախ, «Աշխարհացոյց»-ի խմբագրության համառոտ ձեռագրերում Աղվանքի արևելյան գավառները հերթականությամբ չեն բերվել: Եթե որոշ ձեռագրերում հիշատակվում են արևելյան գավառները, ապա պարզ չէ, թե որ գավառն է մյուսին հաջորդում և այն գավառներն, որոնք ներկայացված են կողք կողքի՝ մեկը մյուսին հարևան են, թե՞ ոչ: Օրինակ, մի շարք ձեռագրերում Հողմազ գավառը միշտ հիշատակվում է Շաքե գավառի տեղում[23] և, թվում է, Հողմազ գավառը պետք է լինի Շաքեի տեղում՝ Բեխի հարևանությամբ:

«Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության 582 ձեռագիրը, որը մյուս ձեռագրերի համեմատ ավելի անխաթար է և մեզ է ներկայանում Աղվանքի գավառների ցանկով, այդ առումով նույնպես ամբողջական չէ: Դրանում պահպանված չէ գավառների հերթականութ-

---

[21] Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 89 և կից քարտեզը, Բ7:
[22] Նույն տեղում, էջ 47, 120:
[23] Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ.), ձեռ. № 582, էջ 177^{բ}, ձեռ. № 1864, էջ 152^{ա}, ձեռ. № 2370, էջ 256^{ա}:

յունը՝ արևելյան գավառները հայտնվել են արևմտյան գավառների կողքին, ինչպես սկզբում նշել ենք, մի շարք գավառներ էլ դուրս են մնացել: Այսպես, Գեղավու գավառը հայտնվել է Շաքեի կողքին[24]: Ինչպես գիտենք, Գեղավուն «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության տեքստում չի հիշատակվում, իսկ Շաքե գավառը ներկայացված է ամենայն մանրամասնությամբ՝ իր հարևան գավառների ու գետերի հետ[25]: Նույն տեղում Գեղավուի կողքին հիշատակվում է Ոստան գավառը[26] (Ոստան-ի-Մարգպան): Այս դեպքում թվում է, թե այս երկու գավառները իրար կից են, բայց դրա հետևանքով արդեն Համբասի գավառը դուրս է մնում, որը Ս. Երեմյանը ենթադրաբար տեղադրում է Գեղավու և Ոստան գավառների միջև[27]:

Նույն պատկերն է նաև Ոստան-ի-Մարզպան գավառի տեղադրության առումով: Մի շարք ձեռագրերում գավառը հիշատակվում է Գետառուի կողքին[28], մեկ այլ տեղում էլ՝ Շաքե գավառի հարևանությամբ[29]: Բայց, ինչպես հայտնի է, այս երկու գավառների՝ հատկապես Շաքեի և թագավորանիստ գավառի միջև գտնվում է Հողմազ գավառը[30]: «Աշխարհացոյց»-ի աշխարհաբար թարգմանությունում Գեղավու և Համբասի գավառները հիշատակվում են Հողմազ գավառի հարևանությամբ. «Իսկ դեպի արևելք գտնվում են Հողմազ, Գեղավու, Համբասի գավառները, ապա Ոստան-ի-Մարզպան գավառը»[31]: Ստացվում է, որ թվարկված այս երեք գավառներից հետո է սկսվում Ոստան-ի-Մարզպան գավառը: Բարեբախտաբար, «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության մեջ պահպանվել է հետևյալ հատվածը. «Քավաղակ քաղաք Աղուանից մերձ ի Կաւկաս. ընդ որոյ մէջ գետն Սէբոջ դէպ ի հարաւոյ»[32]: Այս հաղորդումից ելնելով վստահորեն կարելի է ասել, որ բուն Աղվանքի մայրաքաղաք Կապաղակը գտնվել է

---

[24] ՄՄ, ձեռ. № 582, էջ 177բ:
[25] «Աշխարհացոյց», էջ 29:
[26] ՄՄ, ձեռ. № 582, էջ 177բ:
[27] Տես Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 62 և կից քարտեզը, բ8:
[28] ՄՄ, ձեռ. № 1898, էջ 268բ, ձեռ. № 2370, էջ 256ա, ձեռ. № 3502, էջ 214բ:
[29] ՄՄ, ձեռ. № 5120, էջ 97ա:
[30] Տես Հարությունյան Բ., Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ:
[31] Անանիա Շիրակացի, Մատենագրություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Գ. Աբրահամյանի և Գ. Բ. Պետրոսյանի, Երևան, 1979, էջ 290:
[32] «Աշխարհացոյց», էջ 29:

Ոստան-ի-Մարզպան գավառում՝ Սեբոջ գետի ափին: Աներկբա է, որ այն գտնվել է ոչ թե վերոհիշյալ երեք գավառներից արևելք, այլ՝ Հողմազ գավառի հարևանությամբ[33]:

Սկզբնաղբյուրի աշխարհաբար տեքստում Հողմազ, Գեզավու և Համբասի գավառները հանդես են գալիս մեկ շարքով, ըստ որում՝ վերջինս համարվել է բուն Աղվանքի սահմանային արևելյան գավառը: Սակայն, Ս. Երեմյանը հակառակ հերթականությամբ է ներկայացնում Աղվանքի արևելյան գավառների տեղադրությունը: Նախ՝ Հողմազը, ճիշտ տեղում՝ Ոստան-ի-Մարզանը, ապա դրանից արևելք՝ Համբասին և Գեղավուն[34]: Եթե չհաշվենք աշխարհաբար տեքստում Հողմազ և Գեղավու գավառների նկարագրությունը մեկը մյուսի կողքին, որոնց միջև ընկած է Ոստան - ի - Մարզպան գավառը, ապա տարբերությունը մնում է վերջին երկու գավառը՝ Համբասի, դրանից արևելք Գեղավու, թե՞ Գեղավու, ապա Համբասի: Վերոհիշյալ հարցին որոշակի պատասխան չեն տալիս նույնիսկ «Աշխարհացույց»-ի ձեռագրերը, որտեղ, ինչպես նշել ենք, չի պահպանվել գավառների հերթականությունը, որը պետք է կատարվեր հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք կամ հակառակ ուղղությամբ: Եվ այստեղ մեզ մնում է ընդունել Ս. Երեմյանի տեսակետը՝ Գեղավուն, այլ ոչ թե Համբասին է Աղվանքի արևելյան վերջին գավառը՝ Կովկասյան լեռների հարավային փեշերին: Մեր կարծիքով, դրա համար հիմք կարող է ծառայել նաև համանուն գետի առկայությունը: Եվ եթե այդ գետը կոչվում էր Գեղավու, ապա հարկ չկա նույնանուն գավառը տեղափոխել արևմուտք և նրա տեղը խցկել Համբասին:

«Աշխարհացույց»-ի ձեռագրերում առկա խաթարումները դրանում իրենց մեղքի բաժինն ունեն ընդօրինակողները ուսումնասիրողներին թույլ չեն տվել հարցին տալ ամբողջական և սպառիչ պատասխան: Եվ մենք էլ կփորձենք մոտավոր ճշտությամբ ներկայացնել Աղվանքի արևելյան գավառների վարչական բաժանումը: Ի դեպ, նշենք, որ ուսումնասիրողները խնդրո առարկայի վերաբերյալ գործնականում սահմանափակվել են «Աշխարհացույց»-ի համառոտ տեքստի հաղորդումներով:

---

[33] Տես Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի և կից քարտեզը, Բ7:
[34] Նույն տեղում:

Բուն Աղվանքի արևելյան գավառների շարքում առաջինը Հողմազ կամ Խողմազ գավառն է: Այն հյուսիսից սահմանակից է Կովկասյան լեռնաշղթային, հարավ-արևելքից՝ Գետառու[35] գավառին, արևելքից՝ Ոստան-ի-Մարզպանին, իսկ արևմուտքից՝ Շաքեին[36]: Գավառի տարածքը հետագայում կոչվել է Խաչմազ և ներկայումս գտնվում է Կուրի ձախափնյակի Վարդաշենի շրջանում: Ընդհանուր տարածությունը կազմում է 1330 կմ^2 (?)[37]:

Բուն Աղվանքի Քաղաց դաշտ գավառի տեղադրությունը, ինչպես նշել ենք, չի համապատասխանում սկզբնաղբյուրի տեղեկությանը, իսկ Քաղաց դաշտի վերաբերյալ «Աշխարհացույց»-ում չկա այն հաղորդումը, ըստ որի վերջինս տարածված է եղել գետի երկու կողմերում: Հյուսիսից գավառը սահմանակից է Հողմազ և Ոստան-ի-Մարզպան գավառներին, հարավից՝ Կուր գետին, արևելքից՝ Սեբոջ (Քալաձոր) գետով Բազկան գավառին, իսկ արևմուտքից՝ Գետառուին: Գավառը գտնվում է Սեբոջ և Սանի գետերի ստորին հոսանքի տարածքում[38]: Քաղաց դաշտի տարածությունը մոտ 950–1000 կմ^2:

Ոստան-ի-Մարզպան գավառը հյուսիսից Կովկասյան լեռնաշղթայով սահմանակից է Շիղբքին[39], հարավից՝ Քաղաց դաշտ, Բազկան, արևելքից՝ Համբասի և Գեղավու արևմուտքից՝ Հողմազ գավառներին: Վիճահարույց է մնում Ոստան գավառի հարավային սահմանը: Կարծում ենք, որ այն հասել է Սեբոջ գետի այն հատվածին, որի մյուս ափին գտնվել է Քաղաբերդ ամրոցը և ունեցել է ավելի մեծ տարածք:

«Աշխարհացույց»-ը հաղորդում է. «Քավաղակ քաղաք Աղուանից մերձ ի Կաւկաս. ընդ որոյ մէջ գետն Սէբոջ»[40]: Աներկբա է, որ գետը գտնվում էր Կապաղակ մայրաքաղաքի շրջակայքում:

Բուն Աղվանքի և ոչ մի գավառի տեղադրությունն այնքան տա-

---

[35] Ս. Երեմյանի կազմած քարտեզում Հողմազ գավառը նշված է մի փոքր դեպի արևելք, որի հետևանքով գավառի հարավային հարևան է դարձել Քաղաց դաշտ գավառը (տես Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 55 և կից քարտեզը, Բ7):

[36] Հարությունյան Բ., Հայաստանն ըստ «Աշխարհացույց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ:

[37] Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 55, 120:

[38] Նույն տեղում:

[39] Հարությունյան Բ., Հայաստանն ըստ «Աշխարհացույց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ:

[40] «Աշխարհացույց», էջ 29:

ռակարծությունների տեղիք չի տվել, որքան Բազկան գավառինը: Նախ, ժամանակի ընթացքում սխալ է նշվել գավառի անվանումը՝ Բաղասական դաշտ, Բաքանի, Բազանք և այլն: Հիմնականում գործածության մեջ է եղել առաջին անվանումը: Ինչպես նկատել է Ս. Երեմյանը, «Հետագա արտագրողների մոտ Քաղաց դաշտ, Դաշտ-ի-Բազկան շարքն աղավաղվելով դարձել է Քաղաց դաշտ, ի Բազկան, կամ Քաղա, Դաշտ ի Բաղկան, ապա՝ Դաշտ ի Բաղական և Դաշտ ի Բալասական»[41]: Հետագայում «Աշխարհացոյց»-ի համառոտ № 582 ձեռագրի[42] շնորհիվ վերականգնվել է գավառի անվանումը՝ Ի Բազական: Կարծում ենք, ելնելով վերը նշված հանգամանքից, գավառի անունը պետք է լինի ոչ թե Ի Բազկան, այլ ուղղակի՝ Բազկան: Վրիպումն առաջ է եկել նրանից, որ Դաշտ-ի-Բազկան գավառին նախորդում է Քաղաց դաշտը:

Ս. Երեմյանը իր կազմած քարտեզում Դաշտ ի Բաղասականը նշում է Փայտակարանի տարածքում[43]: Քանի որ այստեղ մեր խնդիրը բուն Աղվանքի գավառների տեղադրությունն է, ապա այդ առումով չենք ծավալվում, այլ միայն նշենք, որ գուցե թե հարևան շրջաններից ինչ-որ մեկը, մասնավորապես, ներկայիս Շամախու տարածքը, որոշ ժամանակ կոչվել է Բաղասական կամ Բազկան անունով: Բայց աներկբա է, որ Բազկան անվամբ գավառ ունեցել է նաև Աղվանքը և դրա տեղադրությունը որոշելիս չպետք է դուրս գալ բուն Աղվանքի սահմաններից: Ս. Երեմյանի քարտեզում գավառն բուն Աղվանքի տարածքում նշված է Հեջերի անվամբ[44], ինչն «Աշխարհացոյց»-ի Բազկան գավառն է, քանի որ սկզբնաղբյուրը հաղորդում է. «Ըստ որում Քաղաց դաշտ, Դաշտ ի Բազկան որ է Հեջերի»[45]: Այսինքն՝ Բազկան գավառը գտնվել է Քաղաց դաշտի հարևանությամբ: Մեր կարծիքով, երկու գավառների միջև սահման է հանդիսացել Սեբոջ գետը. «...դէպ ի հարաւոյ ըստ փոքր Հայոց»[46]: Ս. Երեմյանը գա-

---

[41] Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 42–43:
[42] ՄՄ, ձեռ. № 582, էջ 177[թ]:
[43] Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի և կից քարտեզը, Գ7–Գ8:
[44] Նույն տեղում, Բ7:
[45] Նույն տեղում, էջ 105:
[46] «Աշխարհացոյց», էջ 29:

վառը 4900 կմ² տարածությամբ[47] տեղադրել է ներկայիս Շիրվանում:

Ոստան-ի-Մարզպան գավառը մեծ տարածություն է ունեցել ի հաշիվ Բազկան գավառի, ուստի, կարծում ենք, որ Համբասի գավառն իր տարածքի մեծ մասով կարելի է տեղադրել Բազկան գավառի մեջ: Ս. Երեմյանը դա տեղադրել է Ոստան-ի-Մարզպան և Գեղավու գավառների միջև՝ համապատասխանաբար Կեսիոս (Կոկիսոն) և Գեղավու գետերի ավազանում, ինչի մասին խոսք կլինի ստորև:

Այսպիսով՝ Բազկան գավառը Համբասի գավառից դեպի հարավ տեղաշարժելու դեպքում էլ հյուսիսից սահմանակցում է Ոստան-ի-Մարզպան, Համբասի, Գեղավու, հարավից Կուր գետով Փայտակարան նահանգին, իսկ արևելքից նրա սահմանը Աղուան գետն է, արևմուտքից՝ Քաղաց դաշտ գավառը՝ Սեբոջ գետի երկարությամբ:

Աղվանքի մյուս՝ Համբասի գավառի ճշգրիտ տեղադրությունն ուսումնասիրողների մոտ որոշակի չէ, կարելի է միայն գավառի տեղադրությունը տալ ենթադրաբար, քանի որ այդ հարցում մեզ լիովին չի օգնում այնպիսի վստահելի սկզբնաղբյուր, ինչպիսին է «Աշխարհացոյց»-ը:

«Աշխարհացոյց»-ի ձեռագրերում, ինչպես քանիցս արդեն նշել ենք, չի պահպանվել Աղվանքի գավառների հերթականությունը՝ ինչը հնարավորություն կտար դրա վրա հիմնվելով՝ մոտավոր տալ գավառների, մասնավորապես Համբասի գավառի տեղադրությունը: «Աշխարհացոյց»-ի մի քանի ձեռագրերում[48] Համբասի գավառը հանդես է գալիս Ոստան-ի-Մարզպան գավառի հարևանությամբ, և միգուցե դրանից ելնելով է Ս. Երեմյանը ենթադրաբար տեղադրել է Կեսիոս և Գեղավու գետերի ավազանում[49]: Սա ենթադրություն է և ոչ ավելին, քանզի մենք չենք կարող պնդել, թե վերոհիշյալ հանգամանքն է Ս. Երեմյանին ստիպել գավառը տեղադրել այդ տարածքում: Միաժամանակ իր աշխատության այն մասում, որտեղ ներկայացրել է «Աշխարհացոյց»-ի հաղորդումն բուն Աղվանքի վերաբերյալ, սկզբնաղբյուրն Համբասի գավառի մասին փաստում է. «Իսկ դե-

---

[47] Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 62, 120:
[48] ՄՄ, ձեռ. № 1864, էջ 248ᵇ, ձեռ. № 1883, էջ 152ᵃ, ձեռ. № 1898, էջ 268ᵇ:
[49] Ս. Երեմյանը գավառը 4900 կմ² տարածությամբ տեղադրել է ներկայիս Շիրվանում (Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 62 և կից քարտեզը, Բ8):

պի արևելք գտնվում են... Համբասի գավառները»[50]: «Դեպի արևելք» չի նշանակում, որ Համբասի գավառը պարտադիր պետք էր տեղադրել Կովկասյան լեռների փեշերին՝ իր ամբողջ տարածությամբ ներառելով Ոստան-ի-Մարզպան ու Գեղավու գավառների միջև:

«Աշխարհացոյց»-ի ձեռագրերում Ոստան-ի-Մարզպան և Համբասի գավառների կողք կողքի հիշատակումից թվում է, թե դրանք հարևան են եղել սահմանի ողջ երկարությամբ: Սակայն դա միայն առաջին հայացքից: Համբասի գավառը տարածված է եղել ավելի հարավ և Կովկասյան լեռների հետ սահման չի ունեցել: Մեր կարծիքով գավառի մեծ մասը պետք է տեղադրել Բազկան գավառի հյուսիսային շրջաններում: Կոնկրետացնելով նշենք, որ Համբասի հիմնական մասը պետք է որ փռված լիներ Գեղավու գետի այն մասում, որը Ս. Երեմյանի քարտեզում նշված է որպես Բազկանի տարածք:

Համբասի գավառը հյուսիսից սահմանակից է Գեղավու գավառին, հարավից՝ Բազկանին, արևելքից Գեղավու գետին, իսկ արևմուտքից՝ Ոստան-ի-Մարզպան գավառին և մոտավորապես ունեցել է 1100–1200 կմ^2 տարածություն: Մեր եզրակացությունն այն է, որ Ոստան-ի-Մարզպան և Համբասի գավառները սահմանի ողջ երկարությամբ հարևան չեն եղել: Այս մասին ավելի հանգամանալից խոսք կլինի ստորև:

Աղվանքի վերջին գավառը Գեղավուն է: Այն գտնվում է այժմյան Աղ-սուի շրջանում: Ս. Երեմյանը գտնում է, որ գավառի անունն առաջացել է Գեղ կամ Գել ցեղի անունից և որ տարածությունը 975 կմ^2 է[51]: Ըստ Ա. Երեմյանի կազմած քարտեզի՝ գավառը հյուսիսից սահմանակցում է Կովկասյան լեռնաշղթային, հարավից՝ Բազկան գավառին, արևելքից՝ Աղուան գետին, արևմուտքից՝ Համբասի գավառը դեպի հարավ տեղափոխման հետևանքով, Ոստան-ի-Մարզպան գավառին, հյուսիս-արևմուտքից էլ, սահմանի մի փոքր մասով, Համբասի գավառներին: Մեր նախանշած սահմաններով, մասնավորապես, Գեղավուն սահմանակից է Ոստան-ի-Մարզպան գավառին, ինչի արդյունքում Համբասի գավառի տեղադրությունը տեղափոխվում է դեպի հարավ: Դա հաստատվում է նաև Մ. Բարխուտարյանցի

---

[50] Նույն տեղում, էջ 105:
[51] Նույն տեղում, էջ 47:

հետևյալ հաղորդումով. «(Գեղավու – Ա. Վ.) գավառն ընկած է Կոկիսոն (Կեսիոս – Ա. Վ.) եւ Օրաբան գետակների եւ Կովկասեան մեծ լեռնաշղթայի գագաթնագծի եւ Բօզ-Դաղի հիւսիսային լեռնաշղթայի հիւսիսային լանջերի մէջ...»[52]: Ելնելով այս հաղորդումից՝ վստահորեն կարելի է ասել, որ Գեղավու գավառի սահմանը հասել է Կոկիսոն գետը: Իսկ եթե դա այդպես է, ապա Գեղավուն սահման է ունեցել Ոստան-ի-Մարզպան գավառի հետ: Այստեղից էլ՝ Գեղավու գավառն ունեցել է ավելի մեծ տարածություն՝ մոտավորապես 1080–1150 կմ^2:

Այսպիսին է մեզ ներկայանում Աղվանքի վարչական բաժանումն ըստ «Աշխարհացոյց»-ի:

ARGISHTI VARDANYAN

ADMINISTRATIVE DIVISION OF PROPER AGHVANK ACCORDING TO "ASHKHARHATSUYTS"

SUMMARY

In the seventh century, «Ashkharhatsutys» as a primary source of propor Atghank administrative division gives detailed information on its provinces. For instance, Eghni territorially exceeded other provinces and its borders reached the suburbs of Velis-Tsikhe.

In the east, Getaru was separated from Kholmaz and Kagats Dasht by the river Sani, and Marzipan was located in the vicinity of Kholmaz.

Kagats Dasht was located at the lower tributaries of the rivers Sebodzh and Sani. The southern border of Vostan reached Sebodzh riverbed, on the opposite bank of which was Kagaberd.

Hambasi stretched to the South and did not border with the Caucasian ridge. Most part of this province must have been located in that part of Gegavu valley, which is placed on the map by S. Yeremyan as Bazkan territory. Gegavu borders reached Kokison bordering with Marzpan province in District of Vostan.

---

[52] Բարխուտարեանց Մ., նշվ. աշխ., էջ 124:

АРГИШТИ ВАРДАНЯН

АДМИНИСТРАТИВНОЕ ДЕЛЕНИЕ СОБСТВЕННО АГВАНКА ПО "АШХАРАЦУЙЦУ"

РЕЗЮМЕ

"Ашхарацуйц" VII в. в качестве главного первоисточника административного деления собственно Агванка представляет целостную картину его провинций. К примеру, провинция Ехни в территориальном отношении превосходила иные провинции, и ее границы доходили до окрестностей крепости Велис-Цихе. Провинция Гетару с востока отграничивалась от провинций Хохмаз и Кагац-дашт рекой Сани, а провинция Марзпан локализована по соседству с провинцией Хохмаз. Провинция Кагац-дашт находилась у нижнего притока рек Себодж и Сани. А южная граница провинции Востан доходила до той части русла реки Себодж, на противоположном берегу которой была локализована крепость Кагаберд.

Провинция Хамбаси простиралась к югу и не граничила с Кавказским хребтом. Большая часть этой провинции должна была быть локализована в той части долины р. Гегаву, которая на карте С. Еремяна указана как территория Базкан, границы же провинции Гегаву доходили до реки Кокисон, гранича с провинцией Марзпан уезда Востан.